ՎԻՄԱԳՐԱԿԱՆ

ԽՆԱԾԱԽԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Պատմահնագիտական յուշարձաններով հարուստ Սիւնեաց աշխարհի հին ու լքուած գիւղատեղիներում մինչ օրս պահպանուել են քարայր-մատուռներ, աղբիւրներ, կամուրջներ, գերեզմանատներ, որոնց տարբեր առիթներով անդրադարձել են նախորդ հետազօտողները։ Մեր խնդիրն է ուսումնասիրել այդ յուշարձանները վիմագրագիտական տեսանկիւնից։ Սիւնեաց վիմագրական հարուստ ժառանգութիւնը հիմնականում իր ամփոփ տեղն է գտել «Դիւան հայ վիմագրութեան» մատենաշարի երկրորդ պրակում։ Յաւով պէտք է նշել, որ ինչ-ինչ պատճառներով դրանց մի մասը դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից։ Սոյն յօդուածով փորձ է արւում լուսաբանել Սիւնեաց աշխարհի մելիքական գիւղերից մէկի՝ Խնածախի անտիպ վիմագրերը։

Խնածախը (յայտնի նաեւ՝ Խանազակ, Խոնածախ, Խանածախ անուններով)։ Գրտնւում է ՀՀ Սիւնիքի մարզում, Գորիս քաղաքից 10 կմ հիւսիս-արեւելք։ Ըստ պատմագիր Ստեփանոս Օրբէլեանի հարկացուցակի՝ գիւղը պատմական Հաբանդ գաւառի կազմում է՝ 20 միաւոր հարկով[1]։ Հնագիտական պեղումների արդիւնքները վկայում են, որ գիւղը բնակեցուած է եղել վաղնջական ժամանակներից։ 1980-1981 թթ. հնագէտ Օնիկ Խնկիկեանի կողմից դամբարաններ եւ կացարաններ են պեղուել Խնածախում։ Չորս դամբարաններից պեղուած նիւթերը, բրոնզէ թիթեղից ձեռնափի տեսքով պատրաստուած կախիկը, որը Հայաստանում գտնուել է առաջին անգամ, պահպանւում են Երեւանում[2]։

Ինչպէս նշում է Մորուս Հասրաթեանը, 13-րդ դարից սկսած Խնածախը դառնում է Սիւնիքի առաջնակարգ կենտրոնը (վարչական առումով)՝ գերազանցելով Տաթեւին, Տեղին, Գորիս-Վերին շէնին եւ Անգեղակոթին[3]։ Հեղինակը մի ծաւալուն ուսումնասիրութիւն ունի նուիրուած Քաշաթաղ-Խնածախ բնակավայրերին[4], այնտեղ ապրած ու մեծ պատմութիւն կերտած մելիքական տանը, որտեղ հանգամանօրէն քննւում է մելիքների, նրանց ժառանգների, պատմական այդ ժամանակահատուածում նրանց թողած դերի ու նշանակութեան մասին։ Ըստ փաստերի՝ Քաշաթաղի մելիքական տունը սերում է Վայոց ձորի Պռոշեան իշխանական տոհմից[5]։

Հաբանդ գաւառում ձեւաւորուած մելիքութիւններից ամենազօրեղը մելիք-Հայկազեան տունն է։ Այն յիշատակւում է որպէս Քաշաթաղի, իսկ աւելի ուշ՝ Խնածախի մելիքութիւն։ 16-րդ դարի առաջին կէսին մելիք Հայկազ Ա-ի որդին՝ Հախնազարն իրենց նստավայրը Քաշաթաղից տեղափոխում է Խնածախ գիւղ, որտեղ եւ ծաւալում է իր յետագայ գործունէութիւնը։ Տեղափոխման հիմնական պատճառն այն էր, որ մահմետական իշխանութիւնները Քաշաթաղում սկսել էին բնակեցնել քրդական քոչուոր ցե-

---

[1] **Ստ. Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սն, Թիֆլիս, 1910, էջ 399։

[2] **Օ. Խնկիկեան**, ՊԲՀ, 1988, №1,էջ 235։ **Ս. Հախուերդեան**, Գորիսի ամփոփ պատմութիւն, Երեւան, 2005, էջ 52։

[3] **Մ. Հասրաթեան**, Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ, Երեւան, 1985, էջ 156։

[4] Նոյն տեղում, էջ 155։

[5] Նոյն տեղում, էջ 162։

ղերի, որի համար էլ հայ մելիքները նման որոշում կայացրին[6]։ Գիւղի ձորամիջեան ճանապարհի եզրին[7] պահպանուել է մելիքական ապարանքը, որը 16-րդ դարից մեզ հասած պալատական հազուագիւտ յուշարձան է՝ դարաշրջանին յատուկ յօրինուածքով[8]։ Ապարանքը յետագայում ժառանգել է մելիք Հախնազարի որդին՝ մելիք Հայկազը (1551-1623 թթ.)։ Նա վայելում էր շահ Աբաս Ա-ի համակրանքը եւ ըստ աւանդութեան շահի կողմից ստացել էր «Ծեր առիւծ» մականունը[9]։ Այդ փաստն արձանագրուած է նաեւ այլ աղբիւրներում. «Անապատին հիմնարկողներուն կարգին պիտի յիշենք նաեւ ոչ կրօնաւոր մէկ մը, Ջուղայեցի Հախնազարի որդի Հայկազն իշխանը, որուն անունը անգամ մը տուինք եւ զոր զինուորական քաջութեան համար Շահաբաս շատ սիրեց, և կացոյց զնա իշխան երկրի, հանեալ ի պատիւ մեծութեան»[10]։

Մելիք Հայկազեանների շառաւիղների հետքերը 19-րդ դարի առաջին կէսին գըտնում ենք մե՛րթ Քութայիսում, մե՛րթ Շաքի քաղաքում[11]։ 1899 թուականին տպագրուած «Մուրճ» ամսագրում յիշատակութիւն կայ մելիքական այս տոհմի ներկայացուցիչներից մէկի մասին։ Այսպէս. «Մելիք-Հայկազեան Իսահակ, գնդապետ, վախճանուեց Թիֆլիսում, Փետր. սկզբներին։ Հանգուցեալը, որը վերջին տարիներս ծառայութեամբ իբիրիալումն էր, աւելի առաջ, Ախալցխա եղած միջոցին 10 տարի եղաւ նախագահ Կովկասի Հայոց բարեգ. ընկերութեան Ախալցխայի ճիւղի, ուր նա գործեց այնքան եռանդով, որ ճիւղի առաջարկով՝ ընկերութեան կենտրոնի ընդհանուր ժողովը նորան ընկերութեան պատուաւոր անդամ նշանակեց»[12]։

Գնդապետ Իսահակ Մելիք Հայկազեանցը ստանձնել էր նաեւ 1890 թուականին Անիում Կաթողիկէ եկեղեցու խաչկալը կառուցելու ծախսը[13]։

*Յուշարձանագէտ-պատմաբան Ս. Կարապետեանը մի առիթով անդրադարձել է Քաշաթաղի մելիքական տոհմից սերող Դաւիթ Լազարեւի տապանաքարի վերծանութեանը[14] (**նկ. 1**)։ Տապանաքարը գտնւում է Շաքիի «ղարիպականաց» գերեզմանատանը։ Հանգուցեալի որդին՝ Իվան Դաւթի Լազարեւը, ռուսական բանակի զինուորական գործիչ էր[15]։ 1867 թ. նրան շնորհուել է գեներալ-լէյտենանտի կոչում[16]։ Նշանաւոր գեներալի կրտսեր եղբայրը՝ Յակոբ Դաւթի Լազարեանը (ռուսական բանակի գնդապետ, 1824-1903), ծնուել եւ մեծացել է Շուշիում։ Նրա մասին ասւում է. «Թողնելով զինուորական ծառայութիւնը, զբաղուել է պատմութեամբ։ Իր ձեռքի տակ եղած պատմական կարեւոր արժէք ունեցող փաստաթղթերը եւ տեղեկութիւնները նա տրամադրել է Բաֆֆուն՝ «Խամսայի մելիքութիւնները» եւ ռուս զինուորական պատմաբան Վ. Պոտտոյին՝ «Գեներալ ադիւտանտ Յ. Դ. Լազարեւ», «Ղարաբաղի առաջին կամաւորները»*

---

[6] **Ս. Հախուերդեան**, նշ. աշխ., էջ 5։

[7] **Ա. Ղուկեան**, Արցախի եւ Սիւնիքի մելիքական ապարանքները, Երեւան, 2001, էջ 23։

[8] Նոյն տեղում, էջ 25։

[9] **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 156։

[10] **Մաղաքիա Արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ., Ս. էջմիածին, 2001, սիւն 2731։

[11] **Ս. Կարապետեան**, Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում, հ. 3, Երեւան, 1999, էջ 126։

[12] «**Մուրճ**», Թիֆլիս, 1899, № 1, էջ 144-145։

[13] «**Մշակ**», Թիֆլիս, 1890, № 1, էջ 3։

[14] **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 126։

[15] Генераль-Адьютантъ Иванъ Давыдовичъ Лазаревъ. Составилъ В. Потто, Тифлисъ, 1900.

[16] **Ա. Ս. Ղազիեան**, ԲՀԱ, Հ. Դ. Լազարեանի նամակները Առաքել Կոստանեանցին, 1988թ., հ. 2, էջ 220։

աշխատութիւններում օգտագործելու համար[17]։

Խնածախի տարածքում պահպանուած հնագիտական յուշարձաններն են. գիւղից 1 կմ հարաւ «Խաչին խութ» կոչուող բլրի հարաւային լանջին գտնուող դամբարանադաշտ (մ. թ. ա. 1 հազ.), գիւղի չորս կողմերի բարձունքներին կանգնեցուած 1301, 1581, 1601, 1620 թուակիր խաչքարեր[18]*, Սբ. Հռիփսիմէ եկեղեցի (1610 թ.), քարայր-եկեղեցի, որը գտնւում է Անապատի ձոր կոչուող վայրում, երկու մատուռ, մզկիթ, աղբիւր, նշանաւոր մելիքական ապարանք։*

Սուրբ Հռիփսիմէ եկեղեցի. *Գտնւում է գիւղի արեւմտեան կողմում՝ Գիւնի կոչուող թաղամասում, կառուցել է մելիք Հայկազ Բ-ն։ Եռանաւ, թաղածածկ եկեղեցի է՝ զոյգ աւանդատներով, կառուցուած մանր քարերով, ունեցել է երկու մուտք՝ հարաւից եւ արեւմուտքից, հարաւային մուտքը ներկայումս չի գործում։ Ըստ եկեղեցու ճակատակալ քարի արձանագրութեան՝ կառուցուել է 1610-1615 թթ.։*

1. Եկեղեցու բարաւորին, 2 տող.



1610 /Թ[ՎԻՆ] ՌԿԴ (1615): Նկ. 2

1701 թուականին, եկեղեցուն արեւմտեան կողմից կից կառուցուել է սրբատաշ գաւիթ, իսկ 1905 թուականին՝ զանգակատուն։

2. Գաւթի արեւմտեան պատին՝ արտաքուստ, 5 տող.



ԹՎԻՆ / ՌՃԾ (1701)
ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ՝ Պ[Ա]Ր[Ո]Ն ԱՂԱՃԱՆ ԲԷԿՍ,
ՇԻՆԵՑԻ ԶԳԱՒԹՍ Ի Վ[Ե]Ր[Ա]Յ ԳԵՐԵՋՄԱՆԻ
ԵՂԲՕՐՆ ԻՄՈՅ Պ[Ա]Ր[Ո]Ն ՊՀԱԹՈՐ ԲԷԿԻՆ[19]**:** Նկ. 3

---

[17] **Ա. Մ. Ղազիեան**, ԲՀԱ, ՆՀ. աշխ., էջ 38։

[18] **Թ. Խ. Յակոբեան**, **Ստ. Տ. Մելիք-Բախշեան**, **Հ. Խ. Բարսեղեան**, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2 (դ-կ), Երեւան, 1988, էջ 743։

[19] Այս արձանագրութեանն անդրադարձել են Գորիսի պետական համալսարանի դասախօսներ Ս. Հախուեր-

Խոտ գիւղի վարչական տարածքում գտնուող Մրգաձորի Ս. Աստուածածին եկեղեցու բարաւորի արձանագրութիւնը բովանդակային առումով հետաքրքիր տեղեկութիւն է հաղորդում վերոյիշեալ Պհաթոր բեկի գործունէութեան մասին։ Ստորեւ Մրգաձորի եկեղեցու բարաւորի շինարարական արձանագրութիւնը. «Ես՝ պարոն Պհաթուր պակս, որդի/ պարոն մէլիք Հախնազարին, որ եմք յերկրէն Քաշ[ա]թաղուց, ի գեղջէն Խանածա/խա, ես և մայր իմ Մահփարին, շինել տվինք/ սբ եկեղեցիս փրկութի[ին] հոգոյն թվ[ին] ՌՃԽԹ (1700)[20]»։

Արձանագրութիւններից պարզ են դառնում, որ եկեղեցին կառուցել են Խնածախ գիւղում ապրող Քաշաթաղի Մելիք Հախնազարի կինը՝ Մահփարին եւ նրանց որդին՝ Պհաթուր բեկը։ Երկու արձանագրութիւններում էլ յիշատակուած է միեւնոյն Պհաթուր բեկը, որը որդին էր մելիք Հախնազարի եւ եղբայրը Աղաճան բեկի։ Մրգաձորի եկեղեցու արձանագրութիւնը եւս մէկ դրուագ է ապացուցելու Սիւնեաց ազնուազարմ տիկնանց ծաւալած շինարարական գործունէութիւնը։

*3. **Շինարարական արձանագրութիւն** նախորդին կից, արտաքուստ՝ 4 տող.*



ԱՅՍ ԳԱՒԻԹՍ ՆՈՐՈ
ԳԵՑ ՂԱՀՐԱՄԱՆՅԱ
ՐՈՒԹԻ[Ի]ՆԻԱՆ
1897: Նկ. 4

Ըստ վիմագրի՝ գաւիթը վերանորոգուել է 1897 թ. Ղահրաման Յարութիւնեանի մեկենասութեամբ։

Եկեղեցու ներսում կան սալատապաններ՝ «այս է տապան», «լուսայհոգի» արձանագրութիւններով։ Առաջին հայեացքից թւում է, թէ եկեղեցու ներսում թաղումներ են արուել, մինչդեռ դրանք եկեղեցուն կից գերեզմանատան տապանաքարերն են, որոնք 1937 թ. կոլեկտիւացման տարիներին քանդուել են կոմունիստների կողմից եւ որպէս շինաքար օգտագործուել եկեղեցին վերանորոգելու ժամանակ, որը յետագայում պիտի ծառայեր որպէս պահեստ[21]։

4. Տապանաքարի բեկորներ.

ԱՅՍ Է ՏԱՊԱ[Ն]:

ԼՈՍԱՅՀՈԳԻ:

դեանը եւ Գ. Շաբունցը՝ վերլուծելով այն այլ տեսանկիւնից։ Մենք վերծանութեանը կից տալիս ենք համապատասխան գրչագիրը եւ լուսանկարը։

[20] **Ս. Հախուերդեան**, **Գ. Շաբունց**, Մրգաձոր գիւղի տեղադրութեան եւ այդ գիւղում եկեղեցի կառուցած սիւնեցի տիկնոջ ինքնութեան հարցի շուրջ, Հայագիտական ուսումնասիրութիւն (գիտական յօդուածների պարբերական ժողովածոյ), Ստեփանակերտ, 2017, էջ 14-18։

[21] Այս տեղեկութիւնը մեզ հաղորդեց Խնածախցի Արգամ Լալայեանը։

Հարկ ենք համարում նշել, որ եկեղեցում ժամանակին ծառայել են Տ. Արսէն եւ Տ. Ալեքսանդր քահանաները, որոնց անունները վկայուած են Հայաստանի ազգային արխիւի ծխական մատեաններից մէկում.

1. Արսէն քահանայ – 1881 թ.

2. Ալէքսանդր քահանայ Տէր-Աստուածատրեանց – 1896 թ.[22]*:*

Գիւղի նախկին մանկավարժ Ալեքսանդր Մուսաէլեանի անձնական արխիւում գրառումներ եւ տեղեկութիւններ կան գիւղի պատմութեան մասին: Մանկավարժն այդ նիւթերը հաւաքել է, հաւանաբար, յետագայում գիւղի պատմութիւնը լուսաբանելու եւ տպագրելու համար: Խնածախի դպրոցի տնօրէն Արտաւազդ Աբրահամեանի աջակցութեամբ ձեռք բերեցինք Մուսաէլեանի արխիւում գտնուող նիւթերը, որոնք որոշ առումներով ուղեցոյց դարձան մեզ համար: Այնտեղ եւս յիշատակւում են վերը նշուած քահանաները. «Եկեղեցում աշխատել են երկու քահանայ (տէրտէր), մեծ եւ փոքր: Մեծ քահանան եղել է Արսէն Ասատրեանը, թաղուած է եղել եկեղեցու բակում: Նրա որդին՝ Վասիլ Ասատրեանը, յետագայում հօր դիակը հանել է եկեղեցու բակից եւ տեղափոխել ընդհանուր գերեզմանատուն, իսկ փոքր քահանան՝ Ալեքսան Ասատրեանը, թաղուած է եկեղեցու հիւսիս-արեւելեան կողմում»[23]*:*

Եկեղեցու հիւսիսարեւելեան կողմում երկու տապանաքար կայ՝ գծապատկերներով, անգիր, ուստի դժուարանում ենք ասել, թէ դրանցից որն է Տէր Ալեքսանի տապանաքարը: Մեզ յաջողուեց եկեղեցու բակում՝ պատի տակ գտնել տեղահանուած, ջարդուած եւ փոքր-ինչ եղծուած գրով մի տապանաքար, որն ըստ ամենայնի Արսէն քահանայինն է:

5. ***Տապանաքարի*** *բեկոր, 4 տող.*



[ՏԱ] ՊԱՆ Ի ԳԷ[ՐԵԶՄԱՆ]
ԵՒ ՄԵՐ
Ք ԶԱՐՍԵ[Ն]
. . . Ի: Նկ. 5

Յաջողուեց գտնել նաեւ Արսէն քահանայի եւ կողակցի միասնական տապանաքարը: Ինչպէս վերը նշեցինք, Արսէն քահանայի աճիւնը տեղափոխուել էր գիւղի ընդհանուր գերեզմանատուն:

6. ***Քառակողմ յուշակոթող****, չորս կողմերում արձանագրութիւններ.*

1. **ԱՐԴ ՀԱՆԳՋՈՒՄ / Է ԱՅՍՏԷՂ ԱՆ/ՓՕՓԵԱԼ ՄԱՐ/ՄԻՆԸ ԼՈՒՍԱ/ՀՕԳԻ ԵՒ ՀՈՒՐԱ/ՍԷՐ ՄԱՐՔԱՐ/ԻՏ ՏԷՐ-ԱՍՏ/ՈՒԱԾԱՏՈՒՐ/ԵԱՆՑՆ՝ ԿՕՂԱԿԻՑ /ԱՐՍԷՆ ՔԱՀԱՆԱՅԻ, / ԾՆՎ[ԱԾ] 1865 Թ. / ՎԱԽՃ[ԱՆՈՒԱԾ] 19..:**

---

[22] ՀԱԱ, ֆոնդ 47, ցուցակ 5, գործ 562:

[23] Ալ. Մուսաէլեանի անձնական արխիւ (պահւում է գիւղում՝ իր հայրական տանը):

2. **ԲԱՐԻ ՅԻՇԱ/ՏԱԿՍ ՊԱՐ/ՏԱՈՐՎԱԾ / ԱՐԺԱՆԱ/ՈՐ ԵՆՔ ՀԱ/ՄԱՐՈՒՄ ՄԷՐ / ԾՆՕՂՆԵՐԻՆ / ՄԵՆՔ՝ ԵՂԲԱ/ՅՐՔՍ:**

3.**ԱՐԴ ՀԱՆԳՋՈՒՄ /Է ԱՅՍՏԷՂ ԱՆ/ՓՕՓԵԱԼ ՄԱՐ/ՄԻՆԸ ԼՈՒՍԱ/ՀՕԳԻ ՀԱՅՐ ԺՕՂՕ/ՎՈՒՐԴԻ ԱՐՍԷՆ/ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-/ՊՕՂՕՍԵԱՆ ՏԷՐ-/ԱՍՏՈՒԱԾԱ/ՏՈՒՐԵԱՆՅԻ/ 1881 Թ. ՕԳ 11 ԻՆ ԾՆՎ[ԱԾ] Է 1958Թ ՎԱԽՃ[ԱՆՈՒԱԾ]:**

4. **ԲԱՐԻ ԺՕՂՕ/ՎՈՒՐԴ ՅԻՇԷ/ՅԷՔ ԴՈՒՔ ԱՅՆ ՕՐԸ, ՈՐ/ԾԵՋ ՀԵՏ ԷԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ..1 ՏԱՐԻ/ԲԱ/ ՅՅ ԱՆԳՈՒԹ ՄԱՀԸ ՇՈՒՏ/ԲԱԺԱՆԵՅ ԻՆՁ ԾԵՋԱՆԻՅ...** Նկ. 6, 7, 8, 9:

Ըստ գիւղի տարեցներից Սվետլաննա Աբրահամեանի պատմածի՝ «Ըդերանց Արսենը եւ ըդերանց[24] Ալեքսանը հորեղբօր տղաներ են եղել։ Ասում են գիւղացիների կողմից սիրուած քահանաներ են եղել ըդերանց տղերքը։ Մինչեւ հիմա էլ նրանց տոհմը կայ, ապրում են գիւղում, նրանց ըդերանց ցեղ են ասում»։

Եկեղեցու բակում՝ արեւմտեան պատի տակ կան արձանագիր խաչքարի եւ տապանաքարի բեկորներ.

7. ***Խաչքարի*** *բեկոր, 3 տող.*

Խ[Ա]ՉՍ Մ...
ԱՂԻ ...
ՓՐ[ԿՈՒԹԵԱՆ]: Նկ. 10

8. ***Տապանաքար,*** *2 տող.*



ՊՐԴ Է ՈՐԴԻՆ ԻՄ ՕՀԱՆՋԱՆ ԲԵԿԻՆ
ԹՎ[Ի]Ն ՌՃՀԱ (1722): Նկ. 11

9. ***Տապանաքարի*** *բեկոր, 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊ[ԱՆ]
ԻՇԽԱՆ Թ...
ԳՈԼՈՎ ՊԵ...
ՆԵԱՆ ՄԵՐ ...
ՌՃԾ (1701)...: Նկ. 12

[24] Գորիսի բարբառում խահանային ասել են նաեւ ադեր, այսինքն տէրտէր / ըդերանց-տէրտէրանց/։

*10. **Տապանաքարի** բեկոր, 4 տող.*



...Ա ԱՅՍ Ն
...ՈՒՐՆ ԻՄ Շ...
...Ն ՀՈԳՈՅՆ
...[ՓՐ] ԿՈՒԹԻ[ՒՆ]: Նկ.13

Քարայր եկեղեցի. *Գտնւում է ձորամիջում, Անապատի ձոր կոչուող վայրում։ Այն ամբողջովին ժայռի մէջ է եւ ծառայել է որպէս եկեղեցի (**նկ. 27**)։ Եկեղեցու ներսում կայ մէկ խաչքար (**նկ. 28**), առանց արձանագրութիւնների, տարածքում՝ տապանաքարեր, որոնց վրայ քանդակուած են պարզունակ խաչեր[25]։ Գիւղացիներն այն անուանում են ձորամիջեան եկեղեցի, սակայն Խնածախ գիւղում ընդօրինակուած ձեռագիր յիշատակարաններից մէկում կարդում ենք, որ Անապատի ձորի եկեղեցու անունը Ամենափրկիչ է։ Ձեռագրի հեղինակը Մարիամն է, պատուիրատուն՝ Մարկոս եպիսկոպոսը.*

«Գրեցաւ զսայ ի յերկրիս Քաշաթաղու, ի գուղս Խանածախ, ընդ հովանեաւ Ամէնափրկչիս, ի թըւականիս Հայոց ՌՂԶ-ին (1647). որում և մեք թողաք զսա յիշատակ։ Ով ոք զսա կարդայ և աւրինակէ, մի բերան զմեզ յիշէ և ողորմի ասէ՝ Աստուած իւրն ողորմեսցի, իւր միւսանգամ գալստեանն. ամէն[26]»։

*Դառնանք գիւղի զոյգ մատուռներին։ Դրանցից մէկը գտնւում է Սբ. Հռիփսիմէ եկեղեցուց մօտ 20 մ հարաւ-արեւելք, Վ. Թունանեանի տնամերձ հողամասում։ Տեղացիներն այն անուանում են Քմախաչի սրբավայր։ Միւս մատուռը, որ կոչւում է Բհաւորի[27], կառուցուել է 13-14-րդ դդ. (**նկ. 14**) եւ գտնւում է Անապատի հանդում՝ գիւղից մօտ 2 կմ հարաւ-արեւելք։ Գիւղացիները մի քանի աւանդազրոյց գիտեն այդ մատուռի մասին. այդ հողակտորը, որտեղ կառուցուել է մատուռը, մի գիւղացու է պատկանելիս եղել։ Հողը մշակելու ժամանակ մշակը սերմացուի պարկը ծածկել է շորով, որպէսզի արեւից պաշտպանի։ Նրա որդին եկել, թաքուն մտել է այդ շորի տակ եւ երբ մշակը վերադարձել է սերմացուն տանելու, զգացել է, որ ինչ-որ բան է շարժւում շորի տակ։ Կարծելով, թէ օձ է մտել պարկի մէջ, բահով ուժգին հարուածել է, որից եւ մահացել է նրա մանկահասակ երեխան։ Հէնց այդ նոյն վայրում էլ վշտահար գիւղացին իր որդու յիշատակին կառուցել է մատուռը՝ անուանելով այն Բհաւէրի։*

Մէկ ուրիշ աւանդազրոյցի համաձայն՝ Բհաւորի մատուռից դէպի հարաւ-արեւելք մի փոքրիկ գիւղ է եղել։ Այնտեղ ձիթհան-սրանոց է եղել, որտեղ բուսական իւղ են ստացել։ Տարածքում սրբավայր կառուցելու համար քահանան իւրաքանչիւր գիւղացու առաջարկել է մի բահ օգնութիւն։ Այստեղից էլ ծագել է մատուռի անուանումը՝ Բհաւոր։

Կայ նաեւ այսպիսի մի զրոյց, որում ընդգծւում է մատուռի զօրութիւնը. իբրեւ երաշտի ժամանակ կոյս աղջկայ ձեռքով քար է բերուել Բհաւորից եւ նետուել աղբիւրի

---

[25] **Եր. Լալայեան**, Ազգագրական հանդէս, հ. Դ, Թիֆլիս, 1898, էջ 37։

[26] Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, կազմեց՝ Վ. Յակոբեան, Երեւան, 1984, էջ 256, հ. 421։

[27] Բհաւէր բառի հիմքում ընկած է բահ բառը։ Գորիսի բարբառում բահը արտասանում են պահ, ուստի Բհաւէր՝ Պհաւէր, այսինքն պահով (բահով) մարդ։

ջրի մէջ, որից յետոյ յորդ անձրեւ է տեղացել[28]։

Մզկիթ. *Գիւղում պահպանուել են մզկիթի մնացորդներ կամ աւերակներ, որոնք վկայում են, որ ժամանակին այստեղ քրդեր են ապրել։ Կիսաւեր մզկիթը կամ ինչպէս գիւղացիներն են ասում քումբազը, գտնւում է Ղուզի մայլա կոչուող թաղամասում (**նկ. 15**)։ Այն կառուցել է մելիք Հայկազի հաւատափոխ եղած եւ Ալլահվերդի անուն ստացած որդին, որն իր հօր կենդանութեան օրօք կամեցել է ստանձնել մելիքութիւնը, որի համար գնացել է շահի մօտ, մահմեդականութիւն ընդունել եւ շահի զօրքով եկել հօր դէմ։ Այդ ժամանակ մելիք Հայկազն արդէն մահացած է եղել եւ մելիքութիւնն ակամայից անցնում է նրան[29]։ Վերոնշեալ Ալլահվերդու պատմութիւնը գրի է առել նաեւ Ս. Խանզադեանը[30]։*

Խնածախի նշանաւոր խաչքարերը. *Խորհրդանշական են գիւղը եզերող բարձունքներին կանգնեցուած խաչքարերը, որոնց վիմագրերում յիշատակուած են մելիքական տոհմի նշանաւոր անձինք։ Վիմագրերի հիմամբ Մ. Հասրաթեանը յստակեցրել է Քաշաթաղի մելիքների ծագումնաբանութիւնը, Քաշաթաղում յայտնուելու փաստերը եւ թուագրութիւնը։ Տեղացիներն աւանդազրոյցներ են պատմում խաչքարերի մասին, մինչդեռ դրանցից իւրաքանչիւրը պատմական մի կարեւոր ժամանակահատուածի վկայութիւն է։ Բլուրներից իւրաքանչիւրն ունի իր անուանումը, իսկ այնտեղ կանգնեցուած խաչքարերն իրենց նշանակութիւնն ու պատմութիւնը։ Մենք հնարաւորութիւն ունեցանք գրի առնել գիւղի նախկին մանկավարժ Օլգա Յովսէփեանի հետ զրոյցը։ Ի դէպ, խաչքարերից մէկը գտնւում է հէնց նրանց հողամասի մէջ։ Այդ խաչքարերն իբրեւ թէ կանգնեցուած են եղել գիւղի մի մեծահարուստ մարդու երեխաների յիշատակին։ Ոմանք պնդում են, որ դրանք կանգնեցուել են չորս եղբայրների յիշատակին, ովքեր գիւղի մեծահարուստի զաւակներն են եղել։ Նրանց յիշատակը անմահացրել են՝ գիւղի բարձունքին կանգնեցնելով խաչքարեր։*

*11. **Խաչքար** (1,70 x 0,70 մ) գիւղի հիւսիսարեւմտեան բարձունքին՝ Ճղացի խութ կոչուող բլրի վրայ։ Պահպանուել է կոտրուած խաչքարի վերին կէսը, հետեւեալ արձանագրութեամբ. «ԵՄ՝ ՀԱԽՆԱԶԱՐ, Կ[Ա]ՆԳ...։ Աւելի վաղ Մ. Հասրաթեանը գրառել է խաչքարի բուն բովանդակութիւնը. ԵՄ՝ ՀԱԽՆԱԶԱՐ, ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ՀԱՒՐԵՂԲԱՒՐ ԻՄ ՂՈՒԼԻՆ, ԹՎ. ՌԼ (1581)[31]։ Տեղացիների հաղորդմամբ՝ խաչքարը վնասուել է կայծակից։ Յետագայում, Խաչեր կոչուող տարածքից մի խաչքար է բերուել եւ տեղադրուել վնասուած խաչքարի անմիջապէս կողքին՝ պատուանդանի վրայ։ Քիւին խաչքարի տեղափոխման եւ տեղադրման տարեթիւն է.*



1987 թ.: Նկ. 16

Ըստ Ալ. Մուսաէլեանի անտիպ արխիւի. «1985 թ. Մայիսի 10-ին կայծակը խփում է գիւղի հիւսիսարեւմտեան բլրի վրայ կանգնեցուած խաչքարին։ Այն կրկին կանգնեցում է 1987 թ-ի Մայիսի 10-ին»։

---

[28] Աւանդազրոյցները մեզ պատմեց Խնածախցի Սր. Աբրահամեանը։ Այն գրի է առել նաեւ գիւղի նախկին մանկավարժ Ալ. Մուսաէլեանը, աւանդազրոյցները պահպանուել է նրա անձնական անտիպ արխիւում։

[29] **Եր. Լալայեան**, նշ. աշխ., էջ 14։

[30] **Ս. Խանզադեան**, Հայրենապատում, Երեւան, 1981, էջ 120։

[31] **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 163։

*12. **Խաչքար**. (2,0 x 0,60 մ)[32]։ Գտնւում է գիւղի հիւսիսարեւելեան բարձունքին։ Երկլեզու՝ (հայերէն-պարսկերէն) արձանագրութեամբ 1620 թուակիր խաչքար է[33] (**նկ. 17**)։*

*13. **Խաչքար** (2,20 x 0,80 մ)[34],[35]։ Կանգնեցուած է Մոթալ-դայա բլրի վրայ, Ջումանց կալում կամ Բաղդասարեանների տնամերձ հողամասում։ Ասում են, տարիներ առաջ Բաքուից իրենց գիւղ տեղափոխուած եւ բնակութիւն հաստատած մի ընտանիք հոգեկան խնդիրներով մի տղայ ունէր, ով պնդում էր, որ աստծոյ կողմից հրաման ունի սեւացնելու գիւղի բոլոր խաչքարերը։ Գիւղի գերեզմանատան խաչքարերից շատերն արդէն հասցրել էր սեւացնել ու մի գիշեր էլ, մազութով լի տարան ձեռքին եկել էր, որպէսզի սեւացնի նաեւ իրենց հողամասում գտնուող խաչքարը, որը նրան այդպէս էլ չյաջողուեց։ Տիկին Յովսէփեանն ասում է, որ յաճախ է խաչքարը կործանումից փրկել։ Պատմում է, որ գանձագողութեան նպատակով գալիս էին խաչքարի տակը քանդելու, որտեղ ամփոփուած է մեծահարուստի աղջիկ։ Փաստօրէն, երկու զրոյց է շրջանառւում. խաչքարերը մեծահարուստի չորս տղաների կամ մեծահարուստի երեք տղաների եւ մէկ աղջկայ յիշատակին են կանգնեցուած։*



ԿԱՄԱԻՆ Ա՛Յ, ԵՍ՝ ԱԻՔԱՆ, ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԵ[ԱՆ] ՀՈԳՈ ԻՄՈ, ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ։ ԹՎ[ԻՆ] ՉԾ (1301)։ Նկ. 18

*14. **Խաչքար**. (1,50 x 0,80 մ). սեւ բազալտից[36], կանգնեցուած է պատուանդանի վրայ. Բահաւորի եկեղեցուց հիւսիս, Յուղնատու խութ կոչուող բլրի վրայ։ Յուղնատուն բոյս է, որից էլ ծագել է բլրի անունը։ Հաւանաբար տարածքում նման անունով բոյս է աճել։ Ներկայումս գիրը հողմահարուած է։ Այս խաչքարի մասին տեղեկութիւն է պահպանուել պրոֆեսոր Գր. Գրիգորեանի անձնական արխիւում։ Մեզ յաջողուեց նախկինում արուած լուսանկարի հիման վրայ վերծանել խաչքարի քիւին տեղ գտած արձանագրութիւնը, որի գրաւոր վերծանութիւնը եւս պահպանուել է պրոֆեսորի՝ Սիւնիքում կատարած հետազօտութիւնների՝ Գորիսի շրջանին նուիրուած դաշտային օրագրերից մէկում։*

---

[32] Գր. Գրիգորեանի դաշտային օրագիր, էջ 52։

[33] **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 164։

[34] Նոյն տեղում, էջ 161։

[35] Գր. Գրիգորեանի դաշտային օրագիր, էջ 53։

[36] Նոյն տեղում, էջ 51։

ԵՍ՝ ՄԷԼԻՔ ՂԻՄԱ, ԿԱ

ՆԿՆԵՑԻ ՍԲ ԽԱՉՍ Հ

ՕՐՆ ԻՄ՝ ԳԻՆՈՍԻՆ

Ի ՌԾԹ (1601)[37]**:** Նկ. 19

Թուով տասներեք խաչքար կայ կանգնեցուած Զալուկի խութ կոչուող սրբավայրում։ Դրանք անարձանագիր են, որոնց վրայ կան պարզունակ քանդակներ եւ խաչեր։ Աւանդոյթի համաձայն՝ հէնց այս սրբավայրից են զինուորական ծառայութեան ճանապարհում գիւղի երիտասարդ տղաներին։

Դառնանք գիւղի գերեզմանատանը պահպանուած խաչքարերին։ Վերջերս յուշարձանների պահպանութեան Սիւնիքի մարզային ծառայութեան աշխատակիցների կողմից (ղեկավար՝ Անահիտ Գրիգորեան) աշխատանքներ իրականացուեցին խնածախի գիւղամիջեան գերեզմանատանը։ Հողածածկից մաքրուեցին եւ վեր հանուեցին մի շարք նորայայտ արձանագրութիւններ, որոնք էլ ներկայացնում ենք ստորեւ.

15. ***Խաչքար****. քանդակազարդ, քիւին եւ ստորին հատուածում, թուականը հիմնախորանի վերին երկու անկիւններում.*

ԵՍ՝ ՀԱՅԿԱԶՍ, ԵՒ Մ[Ա]ՅՐՆ ԻՄ՝ Ն[Ա]Զ

ԼՈՒԽ[Ա]ՆՍ, Կ[Ա]ՆԿՆԵՑ[Ո]ՒՑԱՔ

ՍԲ Խ[Ա]ՉՍ

ԹՎ[ԻՆ] ՌՃԱ (1652)

ՓՐԿՈՒԹԻ[ՒՆ] ՀՈԳ[Ո]Յ Մ[Ա]ՒՐՆ

ԻՄՈՅ՝ Խ[Ա]ԹՈՒՆԱՂԻՆ ՈՐ ԷՐ ԿԻՆ ՅԻՇ

Խ[Ա]ՆԻՆ, ՈՐ ԱՒՂԼ[Ա]Ն ՔԷՇԻՇ ԿՈՉԻՆ: Նկ. 20

Աւղլանքէշիշ (Օղլանքէշիշ) թուրքական անձնանուն է, առաջացել է տղայ եւ քահանայ բառերից. յիշատակւում է 1605 թ.[38]*։ Խաթունաղան եւս թուրքական անձնանուն է, նշանակում է ազնուական տիկին։ Գործածւում է 16-18-րդ դդ.*[39]*։*

16. ***Խաչքար****, քանդակազարդ, հիւսածոյ զարդերով քիւի երկու եզրերը կոտրուած, կենտրոնում՝ խորադիր մակերեսի մէջ խաչ, թուականը խաչաթեւերի տակ.*

---

[37] Նոյն տեղում, էջ 49:

[38] **Հր. Աճառեան**, Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Երեւան, 1962, էջ 234:

[39] Նոյնի՝ հ. 2, Երեւան, 1944, էջ 447:

ԹՎ[ԻՆ] ՁԼԸ (1289): Նկ. 21

*17. **Խաչքար.** քանդակազարդ, կենտրոնում փորագրուած են զոյգ խաչեր, ստորին հատուածում՝ 2 տող.*

ԱՆՈՒԱՄԲՆ Ա՝Յ ԵՍ ԽԱՉ/
ԻՋԱՆՈՒ ...ԻՐԷԱ ԿԱՆԳ... Նկ. 22

*Արձանագրութեան վերջին տողի երկու բառերն անընթեռնելի են, յստակ է միայն, որ անձնանուն է, որին յաջորդում է բովանդակային առումով կանոնական **կանգնեցի սուրբ խաչս** ձեւակերպումը։ Գր. Գրիգորեանի դաշտային օրագրում պահպանուել է այս խաչքարի թուականը, որն այժմ եղծուած է։ Վիմագրագէտն իր օրագրում գրառել է՝ Թվ. ՉԱ (1252)[40]։*

*18. **Խաչքար.** քանդակազարդ, ճակատին չորս խաչեր, կենտրոնում՝ քանդակազարդ խաչ, աջ եւ ձախ կողմերում եղծուած արձանագրութեամբ, թուականը աջակողմին։ Հողածածկի տակ մնացած ստորին հատուածը նոյնպէս արձանագիր է, որի վերծանութիւնը պահպանուել է Գր. Գրիգորեանի դաշտային օրագրում[41].*

.Ս **ԻՄ**

... **ՈՅ**

ՈՒ **ՈՏ**

ԽԱՅԱՅ ԿԱԿՆ **ՈՒ**

ԵՅԻՆ ԽԱՉՍ ՈՐԴՈՅ **ԽԱՅԱՅ... ԹՎ ՉԵ (1256/:** Նկ. 23

---

[40] Գր. Գրիգորեան, դաշտային օրագիր, էջ 54:

[41] Նոյն տեղում, էջ 54:

*Բացի արձանագրուած խաչքարերից, գերեզմանատանը տեղ են գտել նաեւ քանդակազարդ, անգիր խաչքարեր (**նկ. 24, 25**)։*

Գիւղում կանգուն է մինչ այժմ ջրի հիմնական աղբիւր հանդիսացող Մեջի մահլի աղբիւրը՝ քահրիզը։ Քահրիզ բառը պարսկերէնից նշանակում է թունելով բերուած ջուր։

19. Աղբիւրի պատին պահպանուել է յուշաքար՝ հետեւեալ արձանագրութեամբ.



ՅԻՇԱՏԱԿ Է ԱԼԲՈՒՐՍ ԱԼՂՈՒԼ ԵՑԻ ԱՓՈՒ ՈՐԴԻ ՌՍԴԱՄԻՆ, ԱՄ ԻՐԻՆ, ԳԱԼՈՒՍՏԻՆ, ԽԱՉԱՏՈ[ԻՐԻՆ], ՅԱՐԱՊԵՏԻՆ, ԴԱՆԻԷԼԻՆ 1861: Նկ. 29

Ուշագրաւ է արձանագրութեան մէջ յիշատակուած «ալղուլեցին»։ Ժամանակին Ալղուլ անունով գիւղ է եղել, որը գտնուել է Հակարոյ գետի աջ ափին։ Այն, իբրեւ հայաբնակ գիւղ, գոյատեւել է մինչեւ 1905 թ.։ Վերջնականապէս հայաթափուել է 1918 թ. եւ բնակեցուել թրքախօս քրդերով եւ թուրքերով[42]։ Աղբիւրի պատին յիշատակուած են ալղուլեցի Ափու որդիները։

Ալ. Մուսաէլեանի արխիւում կարդում ենք. «Քահրիզի ղաբի համար դրամը տրուել է ալղուլեցի Դանիէլեան Ռուստամի կողմից։ Կառուցողը եղել է Խնածախ գիւղի լաւագոյն վարպետ Սիմոն Սիմոնեանը»[43]։

Ամփոփելով՝ արձանագրենք, որ 16-րդ դարի առաջին կէսին մելիքանիստ դարձած Խնածախ գիւղն իր հարուստ անցեալի ու պատմամշակութային ժառանգութեան կրողն է։ Այսօր աւելի քան առաջնային են դառնում Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի մշակութային արժէքների ուսումնասիրութիւնն ու հանրայնացումը, ի փառս մեր պատկառելի ու բովանդակալից անցեալի։ Սիւնիքի նշանաւոր մելիքանիստ գիւղերից մէկի՝ Խնածախի պատմական յուշարձաններն առաջին անգամ փորձ է արւում ներկայացնել համահաւաք ձեւով։ Տեղի թուով 15 նորայայտ արձանագրութիւն առաջին անգամ կը դրուեն գիտական շրջանառութեան մէջ։ Անդրադարձանք նաեւ մելիքական տոհմից սերող անձանց, ովքեր կարեւոր դեր եւ հեղինակութիւն են ունեցել։

Լուսանկարներ



Նկ. 1

Նկ. 2

[42] **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 174։

[43] Ալ. Մուսաէլեանի անտիպ արխիւ, էջ 6։

Նկ. 3

Նկ. 4



Նկ. 5

Նկ. 6

Նկ. 7

Նկ. 8

Նկ. 9

Նկ. 10

Նկ. 11

Նկ. 12

Նկ. 13



Նկ. 14

Նկ. 15

Նկ. 16

Նկ. 17

Նկ. 18

Նկ. 19

Նկ. 20

Նկ. 21

Նկ. 22

Նկ. 23

Նկ. 24

Նկ. 25

Նկ. 26

Նկ. 27 լանկ.՝ Մ. Յակոբեանի

Նկ. 28 լանկ.՝
Մ. Յակոբեանի

ՍԱԹԵՆԻԿ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ